ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը ստորև ներկայացնում է իր կարիքների համար հատուկ կիրառման հաստոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/10» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի մայիսի 03-ին կնքված N «ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/10» պայմանագրում 2021 թվականի մայիսի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգում՝ համաձայն Պայմանագրի 8.6 կետի:

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետի երկարաձգում՝ համաձայն Պայմանագրի 8.6 կետի:

Փոփոխության հիմնավորում «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի մոտ չի վերացել գնման պահանջը:

Պատվիրատու՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
03.05.2021թ. N ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/10 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «20» 05 2021թ.

«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկը, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Զ. Եղիազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Հիմք ընդունելով 03.05.2021թ. թիվ ԵԱՍՄ-ԳՀԱՊՁԲ-21/10 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.6 կետը՝ Կողմերը համաձայնվեցին Պայմանագրով սահմանված Ապրանքի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և սահմանել մինչև 2021թ. հունիսի 27-ը:
2.Պայմանագրի մյուս բոլոր կետերով Կողմերի պարտավորությունները մնում են անփոփոխ:
3. Համաձայնագիրը համարվում է պայմանագրի անբաժանելի մասը, կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
4. Համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը
5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկ	«ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի 88/1	Ք. Երևան, Գ. Լուսավորիչ 7/1
ՀՀ ՖՆ աշխ.գործառն.վարչություն	«Ամերիաբանկ»
Հ/Հ 900012000700	Հ/Հ 1570030830430100
ՀՎՀՀ 02697772	ՀՎՀՀ 00179816
Տնօրեն՝	Տնօրեն
_____Ա. Գրիգորյան	_____Զ. Եղիազարյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ